638
Ա-18

Ա.ԶՇՈՒԿՏՐԵՍՏ

ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ
1938 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԵՐԱՄԻ ՎՈՐԴԵՐԸ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

...ИА ТССР
ИНВ. 1585 2

ԱԶԵՐՆԵՇՐ
Բաքու.—1938 թ.

638
Ч-18
- 7 JAN 2013

Թարգմանեց՝ Հ. Սաղումյան
Թարգմ. խմբագրեց՝ Ա. Առաքելյան
Տեխ. խմբ. Մ. Ս. Ախունդով
Սրբագրիչ՝ Դավթյան

Istehsalata verilmiş 26/III-38.
Capa imzalanmış 4/VI-38.
Cap listi 1. Kaqız formatı 82×110¹/₃₂.
Bir cap listində getmiş hvrufat 67,840.
Baş Mətbuat Mydirliji Myvəkkilliji № 1553.
Azərnəşr № 264,19.
Tiraz 3.000. Sifariş № 397.

Azərnəşr mətbəəsində basıldı, 26-lar adına „Kitab Sarajı", Bakı,
Əli Bajramov kycəsi.

24 SEP 2010
638.2

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՎՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Մինչև վորդերի կերակրումն սկսվելը՝ դարակների համար ձեռք բերել հետևյալ նյութերը և նախապատրաստել կերակրելու համար հատկացվող շենքերը։

1. Աշնանը և ձմռանը, մինչև մարտ ամիսը, յեղեգ պատրաստել և չաթաններ հյուսել դարակների վրա փռելու համար, այլ և սեփական միջոցով պատրաստած նյութեր՝ դարակների համար այն հաշվով, վորպեսզի 25 գրամանոց մի տուփ շերամի սերմին վորդերի 5-րդ հասակում տարածությունը 40 քառակուսի մետրից պակաս չլինի։

Սեփական միջոցներից դարակները պատրաստել փայտանյութից և վրան փռել հյուսովի յեղեգ (չաթան) մեկ մետրից վոչ պակաս լայնությամբ։ Այն շրջաններում, վորտեղ չկա յեղեգ, դարակների վրա փռել ուռենու կամ այլ ծառի (վոչ պտղատու) ճյուղերից պատրաստած լաստեր։

2. Գարնանը, մարտ ամսում, հատկացնել վորդերի կերակրման համար անհրաժեշտ շենքեր—առաջին յերեք հասակների համար բնակելի տներ, 4-րդ և 5-րդ հասակների համար յեղեգնյա շերամատներ, ախոռներ և ծայրահեղ դեպքում՝ չարդախներ։

3. Կերակրելու համար առանձնացված շենքերում և նրանց շուրջը կատարել ուշադիր մաքրում, մանավանդ այնտեղ, ուր հատակը հողից է՝ ծեփել ու հարթել։ Մրջյունների դեմ պայքարելու համար շերամատների բոլոր անցքերը սվաղել, բոլոր դարակների վոտքերը փաթաթել մազութի մեջ թաթախած լաթեր, կամ մոխիր ածել վոտքերի շուրջը։

Մկների դեմ պայքարելու համար հարկավոր է բոլոր ծակերը լցնել քարերով և փշրած ապակով ու լավ սվաղել։ Հետագայում հետևել, վորպեզսի մկներ և առնետներ չմտնեն և նրանց յերևալու դեպքում դիմել հրահանգչին։

4. Վորդերի կերակրման համար հատկացված շենքերն սպիտակեցնել չհանգցրած կրով։ Շերամատների հողե հատակներն անպայման ծեփել ավազի հետ խառնված կրով։

Կերակրելուց հետո իսկույն ախատահանում կատարել ֆորմալինով, մանավանդ այնտեղ, վորտեղ հիվանդություններ են նկատվել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Ախատահանումը և պայքար կրծողների դեմ-անպայման կատարել հրահանգչի մասնակցությամբ։

5. Ինվենտարը, դարակները, կողովները և չաթանները լվանալ տաք մոխրաջրով և չորացնել արևի տակ։

Այնտեղ, ուր ստանդարտային դարակները չեն բավականացնում, պատրաստել և տեղավորել սեփական միջոցներով պատրաստած յերկու և յերեք հարկանի դարակներ, ընդվորում ստելաժների լայնությունը չպետք է մեկ մետրից պակաս լինի։

Այն գյուղերում, վորտեղ վերջին հատակում վորդերը կերակրվում են չարդախների վրա, պատրաստել մի հարկանի ցածր դարակներ, բայց 20—25 սանտիմետրից վոչ պակաս, առանց վորոնց վորդերի կերակրումը չարդախների վրա արգելվում է։

ՎՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Վորդերի կերակրման համար շերամի սերմը կամ արթնացած թրթուրներն ստանալ բացառապես շրջմասքից։ Արգելվում է սերմի արթնացումը և վորդերի կերակրումը՝ ուրիշ տեղից ձեռք բերված սերմից կամ սեփական պատրաստած սերմից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Արգելված սերմից վորդերի կերակրումը հայտնաբերելու դեպքում վորդերն անհապաղ վոչնչացվում են և շերամապահները պատասխանատվության են յենթարկվում (տես կոնտրակտացիոն պայմանագրի 4-րդ կետը)։

2. 25 գրամանոց մի տուփ սերմի կերակրման դեպքում վորդերը տեղավորելու համար պահանջվում է հետևյալ տարածությունը.

Առաջին հատակում	2,5	քառ. մետր
Յերկրորդ հատակում	5,0	„„ „„
Յերրորդ հատակում	10,0	„„ „„
Չորրորդ հատակում	25,0	„„ „„
Հինգերորդ հատակում	40,0	„„ մետրից վոչ պակաս։

3. Առաջին յերեք հատակներում կերակրումն անպայման կատարել հիմնական տներում, իսկ վերջին՝ 4-րդ և 5-րդ հատակներում թույլատրվում է կերակրել թեթև տիպի շերամատներում (յեղեգ ախոռներ և չարդախներ)։

Ախոռներում կերակրելիս ախոռների դռները պահել բաց և մուտքերը վարագուրել նոսր հյուսած յեղեգնյա չաթաններով։

22.892

Լեռնային շրջաններում, վորտեղ շատ անձրեվներ են տեղում, արգելվում է վորդերի կերակրումն ախոռներում։ Բացառություն թույլատրվում է հատուկ ձեվով կառուցված կոլտնտեսային անասնոցների և նախորոք չորացած և լավ ոդափոխած ախոռների համար։

4. Բոլ մերձակա գոտու կոլտնտեսություններում (Աղդաշի, Սամուխի, Զարդոբի և Բարդայի շրջաններ), այնտեղ, ուր շերամատները գտնվում են անտառում, վորդանոցների մի մասն անջատել առաջին յերեք հասակների համար, պատերը յերկու կողմերից ավաղել (դրսից ու ներսից) և վառարաններ դնել նորմալ ջերմաստիճան պահպանելու համար։

5. Նախալեռնային շրջաններում, ուր նկատվում են ջերմաստիճանի խիստ տատանումներ (Ի.Լ.Ղ.Մ.Կուտկաշեն, Վարդաշեն և այլն) թեթև տիպի վորդանոցների պատերը կավով ավաղել՝ շենքերը տաքացնելու համար։

6. Չորրորդ հասակում վորդերը դուրս բերել թեթև տիպի վորդանոցները՝ քնից հետո յերկրորդ որը, իսկ ցուրտ յեղանակներին՝ 3-4-րդ որը։

7. Շենքերի ջերմաստիճանն առաջին 3 հասակներում պետք է լինի 22 աստիճան, իսկ 4-րդ և 5-րդ հասակների համար՝ 21 աստիճան։

8. Շերամատներն որական 5-6 անգամ ոդափոխել 2 անգամից վոչ պակաս, թաց ավլով ավելը։

9. Զարդախների վրա կերակրելիս 5.6 տեղ կղմինդրերը հանել, վորպեսզի որվա ընթացքում ոդը բավականաչափ մուտք գործի, ըստ վորում հանած կղմինդրների տեղերը որվա ընթացքում պետք է փոխել, վորպեսզի արեվի ճառագայթները չնկնեն վորդերի վրա։ Գիշերը և անձրեվի ժամանակ կղմինդրները դնել իրենց տեղը։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ.Հ.Ա. Բանգարան
ՀԱՍՍՐ ... ՍՍՌ
Կ 2 852-63

10. Առաջին և յերկրորդ հասակում վորդերին տալ կտրատած տերև, յերրորդ հասակում՝ ամբողջական տերև և մանր շյուղեր տերեվներով, իսկ չորրորդ և հինգերորդ հասակներում տալ ճյուղերով, կերակրման քանակը հասցնելով որական վոչ պակաս քան, առաջին հասակի համար, 8 անգամ փոքրիկ բաժիններով, 2-րդ և 3-րդ հասակի համար՝ 7-8 անգամ, 4-րդ և 5-րդ հասակների համար՝ 6-7 անգամ՝ ավելացնելով բաժինները։

Վորդերի կերակրումը կատարել գիշեր-ցերեկ, ըստ վորում գիշերը կեր տալ մի անդամից վոչ պակաս։

11. Տերեվները պետք է տալ այնպիսի չափով, վորպեսզի վորդերը լիովին ուտեն և չմնան վորպես փոռոց։

12. Կերը պետք է լինի թարմ և վոչ թաց։ Վորդերին չի կարելի տալ փոշոտ, կեղտոտ տերև։

Տերևի հավաքումը պետք է կատարել առավոտյան և յերեկոյան՝ արեվային կողմից։

Մինչև տերեվը քաղելը, առավոտյան վորդերին կերակրելու համար պետք է ունենալ տերևի պաշար։ Տերևը և ճյուղերը պիտի տանել շերամատուն վորդերին տալուց կես ժամ առաջ։

Շյուղերով կերակրելիս շյուղերը վորդերին տալ քաղելու մոմենտից յերկու ժամ անց։

Ամպամած որերին տերևը կարելի յե քաղել ամբողջ որվա ընթացքում։

Անձրեվի ժամանակ պետք է ունենալ տերևի մի որվա պաշար։

Անընդհատ անձրեվների դեպքում քաղած թաց տերևը չորացնել միջանցահովում, ճյուղերը գլխիվայր կախելով պարանից։

Գյուղական փոշոտ ճանապարհների մոտ գտնվող ծառերի տերևներն ոգտագործել առաջին հերթին։

5-րդ հասակում այդ ծառերի տերևներն ոգտագործելու դեպքում տերևները լվանալ հոսող մաքուր ջրի մեջ, լվանալուց հետո թափ տալ և չորացնել միջանցահովում։

13. Տերևը պահելու համար պետք է պատրաստել գետնափոր տներ։ Քաղած տերևը թափել չաթանների կամ թախտերի վրա բարակ շերտով և հաճախակի խառնել, վորպեսզի չթառամի։ Քաղած ճյուղերը պահել կանգնած, փոքրիկ կապոցներով։

14. Փոցի փոխումն առաջին յերեք հասակներում կատարել ծակոտիկ թղթերով (սյոմնիկ) ամեն հասակում մի անգամ, 4-րդ հասակում փոցի փոխումը կատարել հասակի 4-րդ որը և քնից առաջ. 5-րդ հասակում 3 անգամ, յերկու անգամ հասակի ընթացքում և մեկ անգամ՝ բոժոժ հյուսելուց առաջ։

Անձրևոտ և ամպամած յեղանակներին փոցը փոխել ավելի հաճախակի, թույլ չտալով, վորպեսզի առաջ գա բորբոսում։ Փոցի մեջ վորդեր չթողնել։

15. Վորդերին քնի ժամանակ չի կարելի անհանգստացնել, քնից արթնացած վորդերին պետք է փոխադրել ազատ տեղ և անպայման կերակրել։

Արթնացած վորդերին վերջին հասակներում վերցնել թթենու վոստերով և փոխադրել վաղորոք պատրաստած ազատ տեղեր։

16. Թույլ չտալ, վորպեսզի վորդերը դարակներից ընկնեն հատակին. ընկնելու դեպքում իսկույն հավաքել նրանց և դնել դարակների վրա։

17. Կերակրման ժամանակ հավերին չթողնել շերեմատուն։

18. Կերակրման ժամանակ հիվանդ վորդեր հայտնաբերելու դեպքում անհապաղ առանձնացնել առողջ վորդերը, ամեն որ փոխելով փոցները և դրա հետ միաժամանակ հայտնել շրջանային հրահանգչին։

Փոցը հիվանդ ու սպանված վորդերի հետ միասին զգուշությամբ հավաքել զամբյուղների կամ մեշոկի կտորի մեջ, անհապաղ դուրս բերել շերամատնից, այրել կամ թաղել 0,5 մետրից վոչ պակաս խոնավություն ունեցող հողի մեջ։ Փոցը փոխելիս թույլ չտալ, վորպեսզի վորդերն ընկնեն հատակին։ Վարակված դարակները լավ մաքրել և լվանալ տաք մոխրաջրով։ Ուժեղ վարակման դեպքում առողջներն առանձնացնել և փոխադրել ուրիշ շենք։ Հիվանդ վորդերը հավաքելուց հետո ձեռքերն անպայման լվանալ սապոնով։

Արգելվում է հիվանդ ու մեռած վորդերով կերակրել ընտանի թռչուններին, ինչպես և վարակված շերամատներից անցնել չվարակվածը։

19. Կերի զամբյուղների մեջ չի կարելի դնել հանած փոցը, այդ պատճառով պետք է ունենալ վաղորոք պատրաստած մեշոկներ կամ զամբյուղներ։ Փոցը դուրս տանելու և կեր բերելու համար այդ տարան պահել առանձին։

20. Փոցից հանված ճյուղերն արգելվում է պահել շերամատների մոտ։

ՇԱԽԵՐ, ԲՈԺՈԺՆԵՐԻ ՀՅՈՒՍԵԼՆ ՈՒ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԸ

1. Շախերը պատրաստել դեղնածաղկից, կզել չոփից, սպիտակ առվույտից, սալմայից, այուրֆակից և հոտ չունեցող ու չծակող ուրիշ խոտերից։

Շախերի պատրաստումը կատարել 4-րդ հասակի վերջերին և չորացնել ստվերում։ Չորացնելուց հետո շախերից փնջեր կապել։ Շախերի համար չի կարելի ոգտագործել ծառերի տեսակների ճյուղերը, բացառությամբ այնպիսի շրջաններից, վորտեղ 10 կիլոմետր տարածությամբ չկան խոտեր։

2. Բոլոր դեպքերում արգելվում է շախերի ոգտագործումը կարաղաջի ճյուղերից և կերակրման փոցներից մնացած թթենու ճյուղերից։ Շախերի բարձրությունը 1 մետրից ավել չպետք է լինի։

3. Ժամանակին դասավորել շախերը և թույլ չտալ, վորպեսզի վորդը շախ փնտրելով կորցնի մետաքսը կամ բոժոժ հյուսի փոցի մեջ։

4. Շախերի դասավորումը դարակների վրա կատարել 5-րդ հասակի 9-10-րդ որը հավասարաչափ շարքերով, ցից դրած շարքերի միջև թողնելով 0,3 մետրից վոչ պակաս տարածություն՝ բոժոժ չհյուսող վորդերի կերակրումը շարունակելու համար։

Վորդերը բոժոժ հյուսելիս արգելվում է շախերը ծածկել վորևե բանով։

5. Բոժոժ չհյուսող վորդերի կերակրումը շարունակել պարապդիր կերպով։ Կերը զգուշությամբ նետել տերեվով կամ մանը ընձյուղներով, բոժոժ հյուսող վորդերին չանհանգստացնելու համար։

6. Բոժոժը շախերից հավաքել վորդերը մասսայականորեն շախ բարձրացնելու 9 որից վոչ շուտ հրահանգչի թույլտվությամբ։

7. Բոժոժի բերքը շախերից հավաքելիս բոժոժները մաքրել և միաժամանակ ըծավոր և կիսահյուսած բոժոժներն անհապաղ ջոկել։ Խոտանված և սեվ չխաբ բոժոժը գնման կայանին հանձնել առանձին։

8. Բոժոժը շախերի վրա բոժոժ հավաքելու ժամանակ և հավաքած բոժոժը պահել ստվերում։

9. Բոժոժը հանձնել գնման կայանին շախերից հավաքելու մոմենից մի որից վոչ ուշ։

Բոժոժը տանել գնման կայան կողովների մեջ։ Մի քթոցի մեջ 30 կիլոգրամից ավելի բոժոժ չպետք է լինի։

ԹԹԵՆՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Առաջին և երկրորդ հասակի համար քաղել ընի վրա բսած ընձյուղների և կողքի ճյուղերի տերևները մինչև գագաթը։

3-րդ հասակի համար կտրել ընի բոլոր կողքերի ճյուղերն ու ընձյուղները մինչև գագաթի ձևավորման տեղը։

Կողքերի ճյուղերի և ընձյուղների տերևը չբավականացնելու դեպքում, վորդերը մինչև 3-րդ հասակի վերջը կերակրելու համար թույլատրվում է ոգտագործել ինչպես գագաթի տերևները, նույնպես և ընձյուղները, բաց յուրաքանչյուր ճյուղի $^1/_3$ մասից վոչ ավելի, այդպիսիները կտրելով ներքևից վերև։

Վորդերը 4-րդ և 5-րդ հասակներում կերակրելիս թթենու ծառերն ոգտագործել այնպես, վորպեսզի ծառի վրա չմնա վոչ մի տերև, մինչև վոր մի ծառի տերև լիովին չոգտագործվի, չանցնել ուրիշ ծառի տերևի ոգտագործմանը։

3. Կոլտնտեսություններում կամ առանձին շերմապահների մոտ թթենու բարձրաբուն ծառեր, թոխմաչարներ, խիովաններ լինելու դեպքում՝ վերջիններիս տերևներն ոգտագործել առաջին 3 հասակում վորդերին կերակրելու համար։

Խիովաններից տերևը քաղել առանց խաղողի վազները փչացնելու։

4. Թթենու իդական տեսակներն ոգտագործել առաջին հերթին։ Անձրևվոտ և ցուրտ գարնան, այն շրջաններում, վորտեղ ճյուղերի փտախտ (սոլմա) հիհիվանդություն կա, առաջին հերթին ոգտագործել թթենու արական տեսակների տերևը։

5. Թթենու յերիտասարդ բաղմաբուսնոցք ձեվի

ծառերի տերևը ոգտագործելիս վորդերին 4-րդ հասակում և 5-րդի սկզբներին կերակրելու համար, առաջին հերթին կարել բոլոր ավելորդ ընձյուղները բուսնցքի հիմքի մոտից, թողնելով հիմնական ճյուղերը։ 5 դդ հասակի վերջում մնացած բոլոր ճյուղերը կարել ոդակաձև՝ դագաթի համար թողնելով 25-30 սանտիմետր։

6. Ջահելացման յենթակա ծառերը կերակրելու ժամանակ ոգտագործել լիովին և առաջին հերթին։

7. Ճյուղերը կարել ոդակաձև՝ կարելու տեղերում թույլ չտալով վոչ մի ծռում, այլ և չկոտրել ճյուղերը և չպոկել կեղևը։

Ճյուղերը կարել այգու դանակով, այգու մկրատով, այգու սղոցով և ցակատով։

ԱՄԱՌԱՅԻՆ ՅԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Ամառը և աշնանը կերակրվող վորդերի համար հատկացվող շենքը պետք է լինի հիմնական տիպի, այսինքն՝ ընակելի շենքեր և ախոռներ կամ յերկու կողմերից կավով սվաղած (ներսից ու դրսից, վորտեղ կարելի յե պահպանել պահանջվող ջերմաստիճան) շերամատներ։

Շենքերը պետք է լինեն մաքուր և ոդափոխման համար հարմարեցված։ Աշնան կերակրումների ժամանակ, ցուրտ լինելու դեպքում, վառարաններ դնել։

2. Կատարել ամառային և աշնան կերակրման համար հատկացված շենքերի ուշադիր մաքրումը, ախտահանումն ու լվացման յենթարկել նաև ամբոջ դույքն ու դարակները։ Ախտահանված նյութերն ու դույքը շերամատներում պահելն արգելվում է։

3. Ամառային և աշնանային կերակրման ժամանակ արգելվում է վորդերի կերակրումը չարդախներում և թեթև տիպի չսվաղած շերամատներում։

ՎՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ամառն ու աշնան կերակրվող վորդերի համար կերակրելու տարածությունն նույնպես, ինչպես և գարնան կերակրման ժամանակ, այսինքն 5-րդ հասակի համար 25 գրամանոց մեկ տուփ շերամի սերմին պետք է լինի 40 քառ. մետր։

2. Շենքերի ջերմաստիճանը պետք է լինի 24-25 աստիճան։ Ջերմաստիճանը բարձրանալու դեպքում դռների ու պատուհանների բացվածքները ծածկել թաց վարագույրով, շերամատների շուրջը հողը թաց անել, իսկ յերեկոյան դեմ և վաղ առավոտյան պատուհանները ու դռները պահել բաց, առանց վարագույրի։

Ջերմությունը ցածրացնելու դեպքում (աշնան կերակրման ժամանակ) վառարանները վառել և ջերմությունը պահպանել 23 աստիճանից վոչ ցածր։

3. Վորդերին կերակրել որական 10 անգամից վոչ պակաս (այդ թվում 2 անգամ գիշերը)։ Առաջին հասակների համար քաղել յերիտասարդ ու քնքույշ տերևները։ Վերջին հասակներում կերակրել տերևով կամ մանր տերևածածկ ընձյուղներով։

4. Փոցի փոխարինումը կատարել մի անգամից վոչ պակաս առաջին յերեք հասակների համար և 2 անգամից վոչ պակաս վերջին հասակների համար։

5. Վորդերի կերակրումը պարտադիր կերպով կատարել դարակների վրա՝ գործադրելով փոց և ծակոտկեն թուղթ։

6. Կերակրման ժամանակ արգելվում է նախորդ

կերակրումներին ոգտագործված փոռցային և ծակոտկին թղթի ոգտագործումը։

7. Շերամատներն ամեն որ ավելի թաց ավելով։

ՏԵՐԵՎԻ ՔԱՂՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԿՐԿՆԱԿԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Տերեվը քաղել զով ժամանակ։

2. Վորդերի առաջին հասակների կերակրման համար տերեվները քաղել կողքերի ընձյուղներից, իսկ չբավականացնելու դեպքում՝ գագաթի մատաղ ընձյուղներից, ընձյուղների վրա պարտադիր կերպով թողնելով վերեվի 4—5 տերեվները։

3. Վորդերին 4-րդ և 5-րդ հասակներում կերակրելու համար քաղել այն ծառերի տերևը, վորոնք գարնանը չեն շահագործվել։

4. Գարնանը շահագործված թթենու տերևը քաղելիս ճյուղերը չի կարելի կտրել. այդ դեպքում տերեվը պոկել կամ ընձյուղներից հավաքել ընի վրայի ընձյուղները կտրելու միջոցով, կամ կտրել գարնանը կտրելուց հետո գոյացած խիտ գագաթի ավելորդ ընձյուղները։

5. Աշնան կերակրման վերջում թուլատրվում է պոկոտել ընձյուղների տերեվները։ Պոկոտումը կատարել զգո շությամբ, չթուլատրելով կեղևի և չբացված բողբոջների պոկումը։

6. Այն ծառերից, վորոնք գարնանը չեն շահագործվելու, թուլատրվում է ճյուղերը կտրել միայն ամառային կերակրումների համար։

7. Գարնանը չոգտագործված թոխմաչարներից տերեվն ոգտագործել ամառային կերակրումների համար բնիկի և գագաթի ճյուղավորման հիմքի մոտից ոդակաձև կտրելով տերեվակալած ճյուղերի բոլոր ընձյուղները։

8. Թոխմաչարների 2-րդ շահագործման դեպքում տերեվները պոկոտել ամող ճյուղի ստորին մասից, առանց վերին մասին ձեռք տալու։

9. Հավաքած տերեվները լվանալ մաքուր հոսող ջրի մեջ (առվակներում) կամ ջրհորի (քյահրիզի) ջրով, լվանալուց հետո տերևը լավ թափ տալ և չորացնել միջանցահովում։

10. Հավաքած տերևը պահել հարմար, մութ շենքում, լցնելով բարդանների կամ կղզոնների մեջ 10 սանտիմետրից վոչ ավելի հաստություն ունեցող շերտով։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ
Ա. ՄԱՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
ՀՀ Ազգային գրադարան
NL0293995

22.892
347

АГРОПРАВИЛА

ПО ЧЕРВОКОРМЛЕНИЮ НА 1938 год.

AZƏRNƏŞR
Kənd-təsərrüfat şö'bəsi
Бакъ—1938